ՀՏՀ

Որո՞նք են իրավասության պահանջները:

Կալիֆոռնիայի ցածրարժեք ավտոապահովագրության ծրագրին կամ CLCA-ին իրավասու լինելու համար, սպառողները պետք է.

- Ունենան Կալիֆոռնիայի վավեր վարորդական վկայական
- Սեփականությամբ տիրապետեն տրանսպորտային միջոցի, որն արժե $25,000 կամ ավելի քիչ
- Համապատասխանեն եկամտի իրավասության ուղեցույցներին
- 16 տարին լրացած լինեն *18 տարեկանից փոքր դիմորդները պետք է իրավական տեսանկյունից ազատված լինեն
- Ունենան վարորդական հաջող պատմություն

Դիմելու համար արդյոք պե՞տք է ապացուցեմ իմ եկամուտը:

Այո: Ծրագիրը կընդունի հետևյալ փաստաթղթերից մեկը՝ որպես տնային տնտեսության եկամտի ապացույց՝

Ծրագիր	Պահանջվող փաստաթուղթ
CalFresh (սննդի դրոշմանիշներ)	Նպաստների էլեկտրոնային փոխանցման (EBT) քարտ
CalWorks (բարեկեցություն)	Ծանուցման նամակ
California LifeLine	Կոմունալ ընկերության Lifeline-ի ստուգում
LIHEAP (ցածր եկամտով տան էներգիայի աջակցություն)	LIHEAP-ի (ցածր եկամտով էներգիայի աջակցություն) ստուգում
Medi-Cal / Medicaid	Medi-Cal-ի քարտ
Կալիֆոռնիա նահանգի Զբաղվածության հարցերով վարչության (EDD) դեբետային քարտ կամ նպաստների նամակներ	EDD դեբետային քարտ կամ նպաստների նամակ
SSI (տարեցներ, կույր անձինք, հաշմանդամություն ունեցողներ)	SSI-ի ստուգում
Սոցիալական ապահովություն կամ կենսաթոշակ	Սոցիալական ապահովության կամ կենսաթոշակի նամակ
Եկամտի մակարդակ *	• Դաշնային կամ նահանգային եկամտի հարկային հայտարարագիր • W-2 ձևաթուղթ • 1099 ձևաթուղթ • Աշխատավարձի անդորրագիրpayroll stub

Ինչ ապահովագրություն է տրամադրում Կալիֆոռնիայի ցածրարժեք ավտոապահովագրական պոլիսը:

Ծրագիրը տրամադրում է մատչելի ավտոապահովագրություն, որը համապատասխանում է նահանգի ֆինանսական պատասխանատվության օրենքներին:

Հիմնական պարտավորության քաղաքականության սահմանաչափերն են՝

- $10,000 մարմնական վնասվածքի կամ մեկ անձի մահվան դեպքում
- $20,000 մարմնական վնասվածքի կամ մեկ վթարի դեպքում
- $3,000 սեփականության վնասի պարտավորություն ամեն վթարի համար

Տարեկան $37-$107 լրացուցիչ վճար, սպառողները կարող են ավելացնել.

- $1,000 բժշկական վճարներ ամեն անձի համար
- $10,000 չապահովագրված ավտովարորդի մարմնական վնասվածքի համար մեկ անձի դեպքում
- $20,000 չապահովագրված ավտովարորդի մարմնական վնասվածքի համար մեկ վթարի դեպքում

Ծրագիրը չի առաջարկում համապարփակ կամ ավտոմեքենաների բախումների ապահովագրական ծածկույթ (ապահովագրական ծածկույթ, որը վթարից հետո կվերանորոգի վարորդի սեփական տրանսպորտային միջոցը)

Որո՞նք են CLCA-ի պոլիսի ծախսերը:

Կալիֆոռնիայում տարեկան ապահովագրական վճարները կարող են տարբեր լինել՝ սկսած $232 դոլարից մինչև $932 դոլար: Առկա են զեղչեր, եթե սպառողը 3 տարի շարունակ եղել է վկայական ունեցող վարորդ՝ վարորդական հաջող պատմությամբ:

Հաջող վարորդական պատմությունը սահմանվում է որպես.

- Ոչ ավել, քան սեփական մեղքով և մեկ նյութական վնասով միայն դժբախտ պատահար կամ ոչ ավել, քան մեկ միավոր՝ վերջին երեք տարում ճանապարհային երթևեկության խախտման համար
- Ոչ մի սեփական մեղքով վթար, որը վարորդական պատմության մեջ ներառում է մարմնական վնասվածք կամ մահվան դեպք վերջին երեք տարում
- Դատվածության բացակայություն հանցագործության կամ զանցանքի համար՝ ավտոմեքենայի վարորդական իրավունքի օրենսգրքի խախտման համար

Ըստ վարչաշրջանի դրույքաչափերը ստուգելու կամ վճարումը պլանավորելը* հաշվարկելու համար՝ սեղմեք այստեղ, որ օգտվեք դրույքաչափերի հաշվիչից:

*CLCA-ն առաջարկում է վճարման երկու տարբերակ՝

- Ամբողջական վճարում **ԿԱՄ**
- 20% զեղչ՝ 7 մաս-մաս վճարումների դեպքում (յուրաքանչյուր մաս-մաս վճարման համար կգործի $4.00 գործարքի վճար:)

Ինչպե՞ս եք դիմում ծրագրին:

Կալիֆոռնիայի ցածրարժեք ավտոապահովագրության ծրագրին դիմելու համար հետևեք այս 2 քայլերին՝

1. Լրացրեք իրավասության հարցաթերթիկը,
2. Հետո ավարտեք դիմումի գործընթացը
    - Այժմ 100%-ով առցանց է
    - ԿԱՄ առանց ծախսի հանդիպեք տեղական գործակալի հետ

Խնդրում ենք այցելել mylowcostauto.com կայքէջ և սեղմել Սկսել կոճակը:
Եթե չունեք ինտերնետի հասանելիություն կամ լրացուցիչ աջակցության կարիք ունեք, խնդրում ենք զանգահարել 1-866-602-8861 հեռախոսահամարով:

Ինչպե՞ս պետք է առցանց դիմեմ:

Առցանց դիմելու համար այցելեք mylowcostauto.com և սեղմեք Սկսել, որպեսզի անցնեք իրավասության մասին կարճ հարցաթերթ: Եթե իրավասու եք համարվում, մուտքագրեք ձեր փոստային դասիչը, հետո սեղմեք Դիմել առցանց:

Որո՞նք են ավտոապահովագրություն չունենալու տուգանքները:

Եթե ձեզ մեղադրում են ճանապարհային երթևեկության խախտում կատարելու կամ վթարի պահին ավտոապահովագրություն չունենալու համար, կան տուգանքներ, որոնք ներառում են տույժեր և տրանսպորտային միջոցի գրանցման հնարավոր կասեցում:

Ավտոապահովագրություն չունենալու համար տուգանքների մանրամասներին ծանոթանալու համար՝ սեղմեք այստեղ, որպեսզի օգտվեք Կալիֆոռնիայի DMV կայքէջից:

Քանի՞ տրանսպորտային միջոց կարող է լինել CLCA-ի պոլիսում:

Յուրաքանչյուր համապատասխանող սպառողի թույլատրվում է մինչև երկու ցածրարժեք ապահովագրական պոլիս ունենալ ծրագրի ուղեցույցների ներքո: Փաստորեն, բոլոր տրանսպորտային միջոցները*, որոնք ձեզ վրա որպես դիմորդ են գրանցված, առավելագույնը 2 ավտոմեքենայով, պետք է գրանցված լինեն CLCA-ում:

* Մոտոցիկլետները և կոմերցիոն տրանսպորտային միջոցները ներառված չեն:

Ինչու՞ պետք է իմ բոլոր տրանսպորտային միջոցները գրանցված լինեն CLCA-ում:

Ծրագիրը պահանջում է, որ դիմորդի անունով գրանցված բոլոր տրանսպորտային միջոցները ապահովագրվեն ծրագրի շրջանակներում: Ուստի, ծրագրում մեկ

տրանսպորտային միջոցով իրավասու լինելու համար՝ սպառողները գուցե չունենան ապահովագրության պարտավորություն մյուս տրանսպորտային միջոցների համար՝ որևէ այլ ապահովագրական պոլիսի միջոցով:

Կարո՞ղ եմ ստանալ ապահովագրություն CLCA-ի պոլիսով, եթե ես ունեմ տրանսպորտային միջոցի վարկ:

Այո, բայց պետք է ճշտեք ձեր վարկատուից՝ որոշելու, թե արդյոք ծրագրով տրամադրվող ապահովագրական ծածկույթի սահմանաչափերը կհամապատասխանեն ձեր վարկի պահանջներին:

Ես ունեմ ցածրարժեք ապահովագրական պոլիս: Ինչպե՞ս պետք է կապվեմ իմ ապահովագրական ընկերության հետ կամ վճարում կատարեմ:

ՕՊԵՐԱՏՈՐԻ ԿՈՆՏԱԿՏՆԵՐԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

CAARP ապահովագրական գործակալություն (ապահովագրական պոլիսները սկսվում են AAP-ով)
Հաճախորդների սպասարկում՝ **888-922-4776** - էլփոստ՝ CALC@aipso.com

Էլեկտրոնային վճարումներ՝ https://www.aipso.com/CALCPayments

Փոստային վճարումներ
Վճարման ենթակա չեկը գրեք CAARP-ի անունով յ փոստով ուղարկեք նշված հասցեին՝
CAARP
PO Box 6530
Providence, RI 02940-6530

Integon ազգային ապահովագրական ընկերություն (ապահովագրական պոլիսները սկսվում են IMPLC-ով)
Հաճախորդների սպասարկում՝ **800-632-3306**- էլփոստ՝ UNDNYBP@NGIC.COM

Էլեկտրոնային վճարումներ՝ https://www.acipayonline.com

Ընտրեք՝ Տեղական
Նահանգային կամ Կալիֆոռնիայի տարածաշրջան
Վճարող կառույց՝ Integon ազգային ապահովագրական ընկերություն
Վճարման տեսակ՝ IMPLC-ով սկսվող հաշիվներ
Հեռախոսային վճարում՝ 800-487-4567 տարբերակ 4

Փոստային վճարումներ
Վճարման ենթակա չեկը գրեք Integon ազգային ապահովագրական ընկերության անունով յ փոստով ուղարկեք նշված հասցեին՝
Integon National Insurance Company
PO Box 9048
Bethpage, NY 11714

<u>21-th Century Centennial ընկերություն</u> (ապահովագրական պոլիսները սկսվում են CAR-ով)
Հաճախորդների սպասարկում՝ **800-531-5981**- էլփոստ՝ FAR@farmersinsurance.com

Հեռախոսային վճարումներ՝ **800-531-5981**

<u>Փոստային վճարումներ</u>
Վճարման ենթակա չեկը գրեք 21st Century Ins. ընկերության անունով ֆ ուղարկեք նշված հասցեին՝

21st Century Insurance
Auto Ins. Plan Payment Center
P.O. Box 7247-0243
Philadelphia, PA 19170-0243